В. Р. ГРИГОРЯН. История армянских колоний Украины и Польши (Армяне в Подолии). Издательство АН Армянской ССР, Ереван, 1980, 290 с.

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ. Ուկրաինայի և Լեհաստանի հայկական գաղութների պատմությունն (Հայերը Պոդոլյեում). ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 290 էջ։

Գրախոսվող մենագրության հեղինակ Վ. Ռ. Գրիգորյանը այն քչերից է, որոնք, բարձր գնահատելով մեր ժողովրդի պատմության լիակատար լուսաբանման գործում գաղութահայ պատմության ուսումնասիրության խնդիրը, տակավին 50-ական թվականների վերջերից եռանդով ու նվիրվածությամբ ձեռնամուխ եղան հայկական գաղթօջախների պատմության հետազոտմանը։

Ուսումնասիրման կոնկրետ առարկա դարձնելով Պոդոլյեի բազմաթիվ հայկական գաղթօջախների պատմությունը, Վ. Գրիգորյանը վերջին տասնամյակում մեր գիտական պարբերականներում հանդես եկավ բազմաթիվ հոդվածներով այդ գաղթօջախների պատմության տարատեսակ հարցերի շուրջ։ Ուկրաինական արխիվներում և գրադարաններում նրա կատարած արգասաբեր աշխատանքի արդյունքը եղավ նախ «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)» աշխատությունը (1963 թ.), որտեղ տեղ են գտել 632 արձանագրություն՝ հեղինակի ընդարձակ ներածությամբ։

Իր նախասիրած թեմայի կարևորության հիմնավորումը, ինչպես և ուսումնասիրման վիճակը հեղինակը տվել է գրքի ընդարձակ ներածականում։ Ամենայն բարեխղճությամբ նա գնահատել է Պոդոլյեի հայկական գաղութների վերաբերյալ հայ և օտար հեղինակների կատարած աշխատանքը։ Նշելով նաև նրանց թեր ու դեմ կողմերը, բացերն ու թերությունները։ Գնահատելի է նաև այն, որ նա լուրջ աշխատանք է կատարել սկզբնաղբյուրները ի մի բերելու, դրանք տեղին օգտագործելու, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրը ըստ արժանվույն գնահատելու։ Ուղղությամբ։ Նրա հիմնական սկզբնաղբյուրներն են՝ հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ժամանակագրությունները, ուղեգրությունները, հայ համայնքներին տրված արտոնագրերն ու առանձնաշնորհումները, դատաստանագրքերը, կանոնագրությունները, դատական արձանագրությունները, զանազան նամակներ ու արխիվային այլևայլ փաստաթղթեր։ Ահա այն փաստական ատաղձը, որի վրա, գոյություն ունեցող գրականության պատշաճ և քննական օգտագործմամբ, շարադրված է աշխատությունը։

Վ. Գրիգորյանը ևս հանդիպել է այն դժվարություններին ու խոչընդոտներին, որոնք անխուսափելի են գաղութահայ պատմության ուսումնասիրման ժամանակ։ Խնդիրն այն է, որ որևէ գաղութի ամբողջական պատմության ուսումնասիրությունը իր մեջ ներառնում է ոչ թե կոնկրետ մի պրոբլեմ, այլև բազմաթիվ պրոբլեմներ ու խնդիրներ, որոնք վերաբերում են թե սոցիալ-տնտեսական, թե քաղաքական ու իրավական, թե մշակութային պատմության բնագավառներին և ուսումնասիրողից պահանջում են գիտելիքների լայն պաշար ու պատրաստականություն։ Նախ այդ, և ապա՝ գաղութահայ պատմության ուսումնասիրողը պետք է կարողանա օգտվել մի քանի լեզվով գրականությունից։ Եվ վերջապես, հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրությունը կատարվում է ոչ միայն հայ ժողովրդի, այլև տվյալ երկրի և սահմանակից շրջանների պատմության ֆոնի վրա և դրա հետ առնչված, մի խնդիր, որը ուսումնասիրողից պահանջում է տվյալ երկրի պատմության իրազեկություն։

Դժվարություններ են սրանք, որոնց հաղթահարումը քչերին է հաջողվում, և այդ քչերի շարքին պետք է դասել Վ. Գրիգորյանին։ Գրարարի, ռուսերենի, լեհերենի և ուկրաիներենի, ինչպես նաև Լեհաստանի և Ուկրաինայի միջնադարյան պատմության իմացությունը նրան թույլ է տվել հաղթահարել նշված դժվարությունները։

Ո՞րն են այն հիմնական հարցերը, որոնք քննարկման ու լուսաբանման առարկա են

դարձել երկու բաժիններից և յոթ գյուխներից բաղկացած այս աշխատության մեջ։ Պոդոլյեի հայկական թվով 17 մեծ ու փոքր գաղթավայրերի սկզբնավորումը ըստ պատմական ժամանակաշրջանների, հայերի Պոդոլյե անցնելու շարժառիթները, նրանց հարաբերությունները տեղական ժողովուրդների հետ, գաղթօջախների ներքին ինքնավարությունը, իրավական նորմերը, տնտեսական կյանքը իր բոլոր կողմերով, զրաղմունքները, հայ գաղութների դերը տվյալ երկրի տնտեսական և քաղաքական կյանքում, կապը մայր հայրենիքի հետ, գաղթավայրերի հասարակական-քաղաքական կյանքը, հայ եկեղեցին և նրա ուրույն դերը գաղութներում, գաղութահայ մշակույթը և այլն։ Մենք թվարկեցինք սոսկ ամենահիմնական և ընդհանուր բնույթի հարցերը. պետք է ավելացնել, որ դրանց լուսաբանումը աշխատության մեջ ընթանում է բազմաթիվ այլ փոքր ու մեծ խնդիրների քննարկմամբ։

Հեղինակը հարցերի այդ ամբողջությունը լուսաբանել է պատմական մատերիալիզմի դիրքերից, զինված մարքս-լենինյան մեթոդոլոգիայով։ Դա է, որ հեղինակին հնարավորություն է տվել մեկը մյուսից զատել առաջնային ու երկրորդականը, ցուցարերել դասակարգային մոտեցում, գերի չդառնալով լեհ թագավորների և տեղական իշխանավորների՝ հայերին տված խոստումներին, այլ դրանց ետևում տեսնել պատմական զարգացման ընթացքի թելադրանքը, վերջիններիս դասային և դասակարգային շահը։

Աշխատության առաջին բաժնում առանձին-առանձին տալով Պոդոլյեի հայկական ամեն մի գաղութի պատմությունը՝ սկսած Կամենեց-Պոդոլսկից ընդհուպ մինչև Մոգիլյով-Պոդոլսկն ու Ռաշկովը, այսինքն ամենաուշ շրջանի՝ XVIII դարի գաղութները, Վ. Գրիգորյանը փաստական նյութի ընձեռած սահմաններում, պատմական ակնարկի ձևով, աշխատել է վեր հանել դրանցից ամեն մեկի պատմության ուրույն կողմն ու հիմնական հարցերը։

Վ. Գրիգորյանի բարեխիղճ աշխատանքին պետք է վերագրել Կամենեց-Պոդոլսկի, Յազլովեցի, Ռաշկովի, Ժվանեցի, Բերեժանիի, Բայտայի և պոդոլյան հայկական այլ գաղթավայրերի պատմության ամբողջական շարադրանքը, ինչպես և գրեթե մոռացության մատնված մի շարք գաղթօջախների, սրինակ, Ստուդենիցայի, Պոդհայցիի, Բարի, Բուչաչի, Դուբրովիցայի, Կուրաչիվցիի պատմությունը լուսաբանումը։ Ընդ որում, կարևորն ու արժեքավորն այն է, որ թեև դրանք գրված են պատմագիտական առանձին ակնարկների ձևով, սակայն պահպանված է այդ գաղթավայրերի պատմական զարգացման օրգանական կապը, հանգամանք, որը աշխատության երկրորդ բաժնի հետ միասին լիովին հնարավորություն է տալիս ասելու, որ հանձինս Վ. Գրիգորյանի սույն աշխատությամբ հայ պատմագրությունը ձեռք է բերել Պոդոլյեի հայկական գաղթավայրերի ամբողջական պատմությունը։

Գիտական առումով հույժ ուշագրավ և շատ կողմերով նորություն են աշխատության երկրորդ բաժնում քննարկված խնդիրները։ Պոդոլյեի հայության ինքնավարության հետ առնչվող հարցերը հեղինակը իրավացիորեն քննարկել է Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունների հիման վրա, թեև հայերը ինքնավարությունից օգտվում էին նաև Յազլովեցում, Զոլոչևում, Ստուդենիցայում, Մոգիլյով-Պոդոլսկում և Ռաշկովում։ Ասում ենք իրավացի է հեղինակը այդպես վարվելով, որովհետև կամենիցյան արձանագրությունները են, որ ամենից հարուստ նյութ են բովանդակում «հայ բնակչության իրավական, սոցիալ-տնտեսական և մասամբ էլ քաղաքական կացության վերաբերյալ» (էջ 185)։

Ուշագրավ է համքարական կազմակերպությունների և եղբայրությունների գործունեության լուսաբանումը։ Վ. Գրիգորյանը փաստական նյութի ըստ ամենայնի քննարկմամբ ցույց է տալիս, որ արհեստավորական կազմակերպությունները, ինչպես նաև հոգևոր և երիտասարդական «կտրիճական» եղբայրությունները նոր երևույթ չէին հայերի համար, որ դրանք բերված էին մայր հայրենիքից։

Հետաքրքիր են այն նյութերը, որոնք վերաբերում են հայ կանանց իրավական վիճակին (էջ 231—235)։ «Լեհահայոց դատաստանագրքի» և Կամենիցի հայկական դատարանի արձանագրությունների հիման վրա հեղինակը որոշել է կանանց դերը հայ համայնքի կյանքում, պարզել նրանց իրավական վիճակը, ցույց տվել, որ Պոդոլյեում հայ կանայք մասնակցել են արհեստների որոշ ճյուղերի զարգացմանը (էջ 228), կարող էին հանգես գալ դատարաններում և պաշտպանել իրենց իրավունքները (էջ 229). տղամարդկանց իրավահավասար իրավունքներ ունեին հայրական ժառանգության նկատմամբ, նրանց ամուսնությունը խարսխված էր կամավորության սկզբունքի վրա (էջ 230)։ Վ. Գրիգորյանը կանանց բավական ազատ իրավունքների կապակցությամբ, սկզբնաղբյուրներից քաղված նյութերով, հիմնավորում է իր այն թեզը, որ «լեհահայոց կանանց այդօրինակ իրավունքները նոր ձևաք բերովի կամ էլ օտար ազդեցության

արդյունք չէիս. որ դրանք լեհահայոց գաղթօջախներ էին բերվել հայրենիքից, որտեղ «հայ կանայք դարեր ի վեր ակտիվորեն մասնակցել են երկրի հասարակական-մշակութային կյանքին, տնտեսական գործերին» (էջ 234).

Վ. Գրիգորյանի աշխատության մեջ արժանի լուսաբանություն են գտել եղբայրական երեք ժողովուրդների՝ հայ, ուկրաինացի և լեհ աշխատավոր գանգվածների դարավոր բարեկամությունը, համատեղ պայքարը և տնտեսական ու մշակութային համագործակցությունը։ Այս հանգամանքը ակնառու է դարձնում հեղինակի աշխատության գիտա-քաղաքական նշանակությունն ու արդիականությունը։

Ինչպես հայկական մյուս գաղթօջախներում, Պոդոլյեում ևս հայերը իրենց ուրժանի լուման են դրել իրենց երկրորդ հայրենիքը դարձած երկրի տնտեսական ու մշակութային զարգացման, նրա պաշտպանության բարձրացման գործում։ Սեփական շահերից զատ՝ երախտագիտական զգացմունքի վառ դրսևորումը հավաստող մի իրողություն էր դա։ Սրա պատմական հիմքը այն հյուրընկալ վերաբերմունքն ու առանձնաշնորհումներն էին, որոնց արժանացել էին հայերը առանց բացառության սլավոնական բոլոր երկրներում։ Այս պրոբլեմը Վ. Գրիգորյանի քննարկած կարևոր խնդիրներից է և լուսաբանված է հիմնավոր կերպով։

Պոդոլյեի հայկական գաղութը հավասարների մի հասարակություն չէր։ Հենց այս էլ նկատի ունենալով՝ հեղինակը արժանի ուշադրություն է դարձրել սոցիալական հարաբերությունների և դասակարգային հակամարտությունների խնդրին, ցույց տալով դասային ցցուն բաժանվածության առկայությունը գաղութահայ համայնքների ներսում։ Միանգամայն ճիշտ է հեղինակի գնահատականը, որ նա տալիս է XVII դարի 20—60-ական թվականներին կաթոլիկացման դեմ լեհահայոց մղած շարժումը, նրա մեջ տեսնելով նաև սոցիալական պայքար (էջ 229)։

Գիտական ու ճանաչողական կարևոր նշանակություն ունի «մշակութային կյանքը գաղթավայրերում» գլուխը։ Փաստական հարուստ նյութի լայն լուսաբանումը հնարավորություն է տալիս լավ պատկերացում կազմել Պոդոլյեի հայոց թողած մշակութային ժառանգության մասին։ Հեղինակի հաշվումներով արտեղ ստեղծվել են 130-ից ավելի հայերեն ձեռագրեր, նա պարզել է 40-ից ավելի հայ գրիչների անուններ, որոնք ոչ միայն ձեռագրեր են արտագրել, այլև ստեղծել են պատմական բնույթի խիստ արժեքավոր երկեր. օրինակ, Կամենեցյան տարեգրությունները, Խոտինի պատերազմի պատմությունը, թարգմանական բազմաթիվ գործեր և այլն։ Պոդոլյան հայերի ձեռքով ստեղծված հայատառ դիշաղերեն նյութերը համարվում են այդ մեռած լեզվի ուշ շրջանի յուրօրինակ հուշարձաններ։ Գրքում նկարագրված են նաև Պոդոլյեում պահպանված հայկական հուշարձանները։

Ասացինք, որ աշխատությունը կազմված է երկու բաժնից՝ առաջինը մի երեք, իսկ երկրորդում՝ չորս գլուխներով։ Եվ որովհետև առաջին բաժնում յուրաքանչյուր գաղութ ներկայացված է առանձին-առանձին, ապա կամա թե ակամա ստացվել է հարցերի և դրանց լուսաբանման որոշակի կրկնություն։ Հանգամանք, որից կարելի էր խուսափել, եթե բաժինը գրվեր ոչ թե առանձին-առանձին գաղութներով, այլ ըստ պրոբլեմների և դրանք լուսաբանվեին հեղինակի իսկ կողմից շրջանառության մեջ դրած նյութերով։ Կարելի էր շարադրանքն այնպես հյուսել, որ պրոբլեմների լուսաբանման մեջ երևար նաև ամեն մի գաղութի պատմությունը, և, մանավանդ, այս կամ այն խնդրում նրա խաղացած մեծ կամ փոքր դերը։

Բացի այդ, ամեն մի գաղութի նվիրված ակնարկում հեղինակը աշխատել է տալ այդ գաղութի պատմության հիմնական հարցերի լուսաբանումը, այդ պատճառով այնպես է ստացվել, որ աշխատության երկրորդ բաժնում (ներքին կյանքը) քննարկված մի շարք հարցեր (իրավական, տնտեսական, վարչական օրգաններ, պայքար կաթոլիկացման դեմ, գրագմունքներ և այլն) շատ թե քիչ չափով կրկնվել են նաև առաջին բաժնի տարբեր հատվածներում։ Կրկնում ենք, այդ կրկնություններից կարելի էր խուսափել հարցերի պրոբլեմատիկ քննությամբ, մանավանդ որ Պոդոլյեի հայկական գաղութները հիմնական գծերով ունեցել են զարգացման նույն ընթացքն ու օրինաչափությունները։

Կարծում ենք Վ. Գրիգորյանը լիովին հնարավորություն է ունեցել Պոդոլյեի հայության տնտեսական կյանքին, առևտրի ու արհեստների զարգացմանը և վիճակին առավել լայն տեղ հատկացնել, քան այդ արված է գրքում։ Այս առումով հարկավոր էր մանավանդ ավելի հանգամանորեն քննարկել ու լուսաբանել հայկական դատարանի նյութերը։

Ինչպես նկատել ենք, Վ. Գրիգորյանի աշխատության արժանիքներից մեկը նրա աղբյուրագիտական հարուստ բազան է։ Սակայն տեղ-տեղ հեղինակը, տարվելով փաստական նյութի շարադրմամբ, զիջում է կատարում դեպի անհարկի էմպիրիզմը։ Աղբյուրների տեսության բաժ-

նում որոշ դեպքերում նա շեղվում է բուն տեսությունից, երբեմն անտարկի մանրամասնությամբ պատմելով Պոդոլյսի հայկական այս կամ այն հուշարձանի մասին։

Տարակուսանքի տեղիք է տալիս աշխատության վերնագիրը։ Ճիշտ կլիներ այն վերնագրել «Պոդոլյսի հայկական գաղութների պատմություն», որպիսին դրքի բուն բովանդակությունն է։ «Ուկրաինայի և Լեհաստանի հայկական գաղութների պատմություն» վերնագիրը միայն մասամբ է արտացոլում աշխատության բովանդակությունը, և այն տպավորությունն է ստեղծվում, թե գրքանով սկսվում է մի մատենաշար նշված վայրերի նաև մյուս գաղութների պատմության մասին։

Դիտողություններ են սրանք, որ արվում են գիտական մի այնպիսի լուրջ աշխատանքի, որպիսին Վ. Ռ. Գրիգորյանի մենագրությունն է։ Լինելով կարևոր ներդրում հայ պատմագիտության մեջ, Վ. Գրիգորյանի աշխատությունը միաժամանակ գաղափարապես օգնում է Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի միջնադարյան պատմության մի շարք հարցերի լուսաբանման գործին։

ՎԱԼԵՐԻԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Ա. Շ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Հայ միջնադարյան հանելուկներ (V—XVIII դդ.)։ ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1980, 522 էջ։

Վաստակաշատ գիտնական Ասատուր Մելքոնյանի ժամանակն այս գիրքը Հայ միջնադարյան գրավոր հանելուկների անգնահատելի ժողովածուն է։ Գիրքը պայմանականորեն բաժանված է երեք բաժնից. ա) գրականագիտական և բանահիրական բնագրական ուսումնասիրություններից, բ) հանելուկների քննական-համեմատական բնագրերից, գ) գիտական հարուստ, տարբերակի և մանրամասն ծանոթագրությունից։ Բնագրերի բաժինը, հիմնվելով նյութի ժամանակագրական սկզբունքից, հնգինակը բաժանել է երեք շրջանի. «Գիրք առաջին (V—XI դդ.)», «Գիրք երկրորդ (XII դ.)» և «Գիրք երրորդ (XIII—XVIII դդ.)»։ Բնագրերի որոգնական շարունակությունն են կազմում «Հավելվածները» և «Գաղտագրված ազգությունները, տարեգրքեր և գանձեր, բառարան, լրացումներ» բաժինները։

Հանելուկը հայ գրականության հնագույն ժանրերից է։ Անհատական գրավոր հանելուկները, ինչպես ցույց է տալիս Ա. Մելքոնյանը, ծագել են V դ.՝ հայ գրականության սկզբնավորման շրջանում։ Հանելուկի ժանրի հիմնադիրը, բառ Ա. Մելքոնյանի, Դավիթ Քերթողն է, V դ. սկզբի մի հնգինակ, որին Ա. Մելքոնյանը տարբերում է Դավիթ Անհաղթից և նույնացնում՝ Դավիթ Քերականի հետ։ Դավիթ Քերթողի հանելուկները ունեն բովանդակության ներքին միասնություն՝ բոլորն էլ նվիրված են կարի այնպիսի մի մեծ երևույթի, ինչպիսին էր հայ գիրը։ Հայանգործությունը։ Գիր և գիրը—ահա այն նյութը, որը դարձել է Դավիթ Քերթողի հանելուկների առարկան։ Դավիթ Քերթողը նաև հանելուկների շարքի հիմնադիրն է։

Ա. Մելքոնյանն այնուհետև անդրադառնում է հանելուկի ժանրի անվանման տարբեր ձևերին, ճիշտ համարելով ընդունված հանելուկ ձևը։ Քննելով հանելուկի ժանրային առանձնահատկությունները հարցը, ինչպես նաև ժողովրդական բանաստեղծության հետ ունեցած առնչությունները, հնգինակը միանգամայն իրավացի այն տեսակետն է արտահայտում, որ գրավոր հանելուկները «...իրենց հիմքում պահպանել են ժողովրդական հանելուկների հիմնական առանձնահատկությունները» (էջ 18)՝ նյութի հատկանիշների ֆոնաբերական, այլաբանական կերպարման եղանակը, որ ժողովրդական ու գրավոր հանելուկներն ունեն թեմատիկ բնագրման տարբեր սահմաններ և որ ժողովրդական հանելուկների մեջ առավելապես իշխում է աշխարհի կյանքի ոգին ու մատնոցությունը։ Մինչդեռ գրավոր հանելուկների մեջ գալիս են գրավում ատոմատարանական գիտելիքները, կրոնական աշխարհայեցողությունը, հոգևոր թեման և ուղղագրական բնույթը։ Հնգինակը պատշաճ տեղ է ավել նաև հանելուկի ծագման, զարգացման և անվանման հասարակական-պատմական պայմանների և գրական-գեղագիտական նախադրյալների քննությանը, ինչպես նաև հանելուկի՝ իբրև բանաստեղծության ուրույն տեսակի, միջնադարյան գրականության աշխարհանկանգնման գործում խաղացած դերի բացահայտմանն ու գնահատությանը։

Ա. Մելքոնյանն առանձնակի սիրով է անդրադարձել նեղաձև Ճնորհալու հանելուկներին։ Ճնորհալին գրել է ոչ միայն շուրջ 22 հանելուկ, այլև ստեղծել է հանելուկի գաղտնի ձևը՝